ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Փոքր Վեղի բնակավայր

«ԶԱՐԹՈՆՔ» մանկապարտեզ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ Քրիստինե Ստեփանյան

ԴԱՍԱԽՈՍ՝ Ժաննա Ավետիսյան

ԹԵՄԱ՝

Կերպարվեստի պարապմունքները մանկապարտեզի կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերում։

2022թ.

Բովանդակություն

1.Ներածություն:----------3

2.Գեզագիտական դաստիարակություն:----------4

3.Կերպարվեսի գործունեություն:----------5

4.Կերպարվեստային գործունեության խնդիրները:----------6

5.Կերպարվեստային պարապմունքների նախապատրաստում:--------7

6.Նկարչական պարապմունքների նախապատրաստում:----------8

7.Ծեփակերտման պարապմունքների նախապատրաստում:----------9

8.Կառուցողական գործողությունների նախապատրաստում:----------11

9.Գործնական մաս՝ նկարչության,ծեփակերտում,կառուցողական պարապմունքներ:----------13

10.Եզրակացություն:----------15

11.Օգտագործված գրականության ցանկ:----------16

12.Հավելվածներ:----------17

Ներածություն

Երեխայի զարգացման հարցում անփոխարինելի դեր են կատարում կերպարվեստային գործունեության տարբեր ձևերը՝ նկարչությունը, ծեփակերտումը, դեկորատիվ կիրառական ավեստը, կոնստրուկտավորման աշխատանքները: Ստեղծագործական բնույթի պարապմունքները երեխաներին զինում են գիտելիքներով, պատճառում են ուրախություն, արվեստի նկատմամբ վերաբերմունք:Կերպարվեստային գործունեությունը պետք է ղեկավարվի հմուտ մասնագետների կողմից:Դաստիարակը պետք է կարողանա կողմնորոշվել արվեստի, կերպարվեստի տարբեր բնագավառներում, տիրապետի նկարչական տարբեր ձևերի կարողություններին և նկարչական տարբեր միջոցներին, տեխնիկական հնարքներին, մանկան ստեղծագործական մանկավարժահոգեբանական գործընթացի առանձնահատկություններին:

1.Առարկայի դերն ու նշանակությունն մասնագետի կայացման արդյունավետությունը կախված է ուսուցման մեթոդների և ձևերի իմացությունից ու տիրապետելու ունակությունից: Մասնագետը պետք է գաղափար կազմի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայիինչպես նաև ընդհանուր մեթոդների մասին: 2.Առարկայի դասավանդման հիմնական նպատակն է բացահայտել մեթոդական այն հարցերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կերպարվեստային գործունության զարգացման համար: Կերպարվեստային գործունությունը կարող է զարգանալ միայն նպատակաուղղված ղեկավարման պայմաններում: Նման ղեկավարումը հնարավոր է այն դեպքում, երբ դաստիարակը հստակ պատկերացնում է իր գործունեության ոլորտը, տեղյակ է ծրագրի բովանդակությանը և մեթոդներին, տիրապետում է նկարչական ունակություններին: Մանկավարժը ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմանները երեխայի իրականության զգացմունքապատկերավոր ընկալման համար: 3. Առարկայի խնդիրներն են՝ երեխայի կերպարվեստային կրթությունը ուղղել նրա ստեղծագործական, պատկերային արվեստի զարգացման, շրջակա միջավայրի իրականության տպավորությունների արտահայտման, արվեստի և գրականության վրա: Նպաստել երեխայի կերպարվեստային կարողությունների, հմտությունների զարգացմանը: Կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի խնդիրն է ստեղծել և կանոնակարգել ուսուցման մեթոդների դիդակտիկ հիմքերը առարկայի դիդակտիկ դրույթները:

Առարկայի դասավանդման կարևորագույն պայմաններից է ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուրին: Ծրագրային նյութը պարբերաբար պետք է համալրվի ժամանակակից մեթոդներով, գիտության և տեխնիկայի բնագավառում ստեղծված նվաճումներով, գրականությամբ:

Գեղագիտական դաստիարակություն։

Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է կրտսեր տարիքից՝իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ։

Այն ենթադրում է՝ երեխայի ընկալման,երևակայության,հետաքրքրությունների,զգացմունքների,ունակությունների և հակումների զարգացում,հիշողության ձևավորում։Երեխան ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով։Հուզական տպավորությունները և ապրումները խոր հետք են թողնում երեխայի կյանքում,և դրանք հետագայում երբեք չեն մոռացվում։Մանկության շրջանում հուզական ներդաշնակությամբ զուգորդված զգացողությունները վստահություն են ներշնչում աշխարհի հանդեպ և պահպանվում են ամբողջ կյանքում։

Գեղագիտական դաստիարակությունը բացահայտում ե երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր որակներ։Այն պետք է ուղղված լինի երեխայի՝ստեղծագործելու ցանկության արթնացմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը։

Գեղեցիկ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը։Այն նպաստում է կրտսեր տարիքային երեխաների հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը։Երեխայի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է։Երեխաների մտածողությունը դառնում է ավելի ճկուն,նպատակային,երբ նրանք միջավայրը հարմարեցնում են իրենց գործունեության պահանջներին.միջավայրով պայմանավորված՝ հետաքրքիր,գործնական խնդիրները սաներին դարձնում են ավելի կարող,հմուտ,հնարամիտ,գործունյա և անկախ։Այն բավարարում է երեխայի հետաքրքրությունները,ապահովում նրա անվտանգ և առողջ կենսագործունեությունը։

Երեխաների ուշադրությունը հարկավոր է հրավիրել այն բանի վրա,որ իրենք խաղում և պարապում են մաուր,լուսավոր,գեղեցիկ կահավորված խմբասենյակում։Զբոսանքի ժամանակ երեխաները պետք է սովորեն տեսնել շրջակա միջավայրի գեղեցկությունը,դիտեն և զննեն մանկապարտեզի տարածքը,տեսնեն ներդաշնակությունը՝ծաղկանոցի,այգու,խաղահրպարակի միջև։

Կերպարվեսի գործունեություն:

Երկուսիցերեք տարեկան երեխաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ։Նման զբաղմունքը երեխային պարգևում է ուրախություն և բերկրանք։Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան ունենում է դրական զգացողություններ,ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորություն։Կրտսեր խմբում կերպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում `երեխան ձեռք է բերում առարկայի ձևը զգալու և այն արտաքին աշխարհին փոդանցելու հմտություն։Ձևավորվում են առարկաների ձևի,գույնի,չափի,վերաբերյալ առաջին զգայական կողմնորոշումները ,զարգանում է լսելու,դիտելու,վերլուծելու ունակությունները։Ձևավորվում են պատկերացումներ այ մասին,որ մատիտով,վրձինով,յուղամատիտով նկարում են ,իսկ ծեփանյութով՝ ծծեփում։

Այս տարիքային խմբում երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել թղթի վրա մատիտով,վրձինով ստացվող գծերի,ուրվագծերի,գույների,պատկերների վրա։Անհրաժեշտ է երեխաներն առաջարկել պատմել այն մասին,թե ի՞նչ են իրենք նկարել,և ինչի՞ է այն նման։Պարզագույն առարկաներ և երևույթներ նկարելով՝ երեխան ճանաչում է դրանք,և նրա մեջ ձևավորվում են առաջին պատկերացումները արվեստին ոլորտում։Անհրաժեշտ է,որ երեխան կարողանա տեսնել իրականի և նկարածի միջև նմանություններ և տարբերություններ։Սկզբում նա պետք է աշխատի տաք գույներով։Դա օգնում է նրան ուշադիր լինի շրջապատում գնվող վառ,պայծառ գույներով առարկաների նկատմամբ։

Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան աստիճանաբար սովորում է գույների,գծերի լեզվով պատմել իր տեսածի,զգացածի մասին, ինչպես նաև զարմանք արտահայտել շրջապատի երևույթների վերաբերյալ։Կերպարվեստային գործունեությունը լավ տրամադրության սկզբնաղբույր է,ուստի անհրաժեշետ է խթանել և զարգացնել հետաքրքրասիրությունը ստեղծագործական աշխատանքի նկատմամբ։Երեխան թղթի վրա արտահայտում է ոչ մ իայն այն,ինչ տեսնում է շրջապատում,այլև դրբսևորում է սեփական երևակայությունը,խթանելով ստեղծագործական կարողությունների զարգացումը։

Կերպարվեստային գործունեության նպատակն է.

- Արթնացնել գեղեցիկի նկատմամբ հուզական վերաբերմունք։
- Զարգացնել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ։
- Շարունակել,զգայական ընկալման միջոցով,խթանել երեխաների դրական հույզերի զարգացումը։

Կերպարվեստային գործունեության խնդիրները։

- Ծանոթացնել կերպարվեստային նյութերին ,ձևավորել մատիտով,վրձինով,գուաշով,ջրաներկով և ծեփանյութերով աշխատել նախնական հմ տություններ։
- Զարգացնել պարզ առարկաներ պատկերելու կարողություններ։
- Սովորեցնել նկարելով,ծեփելով բացահայտել առարկաների հարաբերությունները։
- Ձևավորել կերպարային պատկերացումներ,շոշափելու միջոցով զարգացնել ուշադրությունը,դիտողականությունը,պատկերաումներ առարկաներին բնորոշ հատկությունների՝ ձևի,չափի,գույնի նկատմամբ։

Կրտսեր խմբում անհրաժեշտ է զարգացնել երեխաների հետաքրքրասիրությունը և ուշադրությունը կերպարվեստային նյութերի նկատմամբ։Այս տարիքային խմբի կերպարվեստային ծրագրերի առաջնային նպատակներից է՝ տեխնիկայի ուսուցումը.մատիտը բռնել 3 մատով,կատարել տարբեր վարժություններ՝ կետեր,գծեր,շրջանակներ,աղեղներ,մեծ և փոքր գույնավոր օղակներ։Նկարչական տեխնիկայի խնդիրներից է՝ վրձնին ծանոթացումը.երեխաները սովորում են վրձինը ճիշտ բռնել և կատարել վարժություններ՝ վրձնահարվածներ,վրձնահպումներ,մեկ գույնի օգտագործմամբ պատկերել պարզ առարկաներ ,ճանաչել և տարբերել հիմնական գույները,որոշ բաղադրիչ գույներ,կատարել վարժություններ երկու հակադիր գույների զուգակցմամբ։Այս տարիքային խմբում երեխայի շարժումները սահմանափակ են։Այդ առումով՝ խնդիր է առաջանում հետևյալ երեխայի ճիշտ նսելու և բնականոն կեցվածքի պահպանման գործընթացին։

Պարապմունքներն ըստ տեսակի այս տարիքային խմբում շաբատվա ընթացքում բաշխվում են հետևյալ կարգով.

- Նկարչություն-1 անգամ
- Ծեք-0,5 անգամ
- Կառուցողական աշխատանք-0,5 անգամ։

Ծեփը և կառուցողական աշխատանքնվ անցկացվում են հետևյալ հերթագայմամբ՝ մի շաբաթ ծեփ,մի շաբաթ՝ կառուցողական։Ամսվա կտրվածքով կազմակերպում ենք 4 նկարչության ,2 ծեփի, 2 կառուցողական պարապմունքներ՝ 10-15 րոպե տևողությամբ։

Ապլիկացիայի պարապմունքներ այս տարքային խմբում չենք կազմակերպում,սակայն դրա տարրերն օգտագործվում են խավատախտակի վրա աշխատանքի ժամանակ.երկրաչափական պատկերների միջոցով կառուցվում են այս կամ այն պատկերները։

Կերպարվեստային պարապմունքների նախապատրաստում։

Ընտրելով ծրագրային նյութը և որոշելով թեման է դաստիարակը ուսուցման մեթոդների և հնարների ճիշտ ընտրությամբ կապահովի թյութի առավելագույն ընկալումը։ Պլանավորման ընթացքում որոշվում է ,թե ինչ նախապատրաստակ աշխատանք է հարկավոր կազմակերպել՝ դիտում,զրյույց,պատմվածքի ընթերցում,ծանոթացում նոր խախալիքին և այլն։Մեկ օր առաջ դաստիարակը նախապատրաստում է պարապմունքի համար անհրաժեշտ նյութերը/նկարչական թղթի հակառակ կողմում գրվում է երեխայի անունը,ամսաթիվը/,անուններով թղթիկներ է նախապատրաստում նաև ծեփի համար։Անհրաժեշտության դեպքում երանգավորում է թուղթը։Կտրվում են թեմային համապատասխան երկրաչափական պատկերներ,սրվում են ջարդված մատիտները,պատրաստվում է աղի խմոր։Որոշ նյութեր պատրասվում են հենց նույն օրը՝ ջրով բացվում է ջրաներկը կամ գուաշը։Ծեփակերտման և կառուցողական աշխատանքների անվանաթղթերը/փոքրիկ զոլակներ/դաստիարակը բաժանում է պարապմունքի վերջում։

Երեխաների պատկերացումներն այս կամ այն առարկայի վերաբերյալ ճշտելու նպատակով կազմակերպվում են զբոսանքներ,էքսկուրսիաներ,դիտակտիկ խաղեր,որոնց ընթացքում ծանոթացնում են առարկների ձևերին,չափերին,գույներին։

Պարապմունքներից առաջ անհրաժեշտ է օդափոխել խմբասենյակը.այս պարագայում երեխաները շուտ չեն հոգնի։Նմուշօրինակները դրվում են անհրաժեշտության դեպքում երկու-երեք տարբերակով,որպեսզիմ տեսանելի լինեն բոլորի համար։

Կրտսեր խմբերում կերպարվեստային նյութերը սեղաններին է դնում դաստիարակը։Սակայն որոշ նյութեր երեխաներին է հանձնարարվում դնել սեղանին.մատիտները,վրձինները։Նման օգնությունը հետաքրքրություն է առաջացնում կերպարվեստային պարապմունքների նկատմամբ և խթանում աշխատանքային դաստիարակաությունը։

Պարապմունքի ավարտին դաստիարակը երեխաներին սովորեցնում է հավաքել և իրենց տեղերը դնել կերպարվեստային պարագաները,լվացվել անհրաժեշտության դեպքում։Աստիճանաբար ձևվորվում են ինքնասպասարկման կարողություններ։

Նկարչական պարապմունքների նախապատրաստում։

Պարապմունքներից առաջ դաստիարակը նախապատրաստում է աշխատանքային սեղանը։Այնտեղ պետք է դրված լինեն միայն ամենաանհրաժեշտ պարագաները՝ նկարչական թուղթ/սպիակ կամ երանգավորված/,ըստ երեխաների քանակի՝մեկական մատիտ կամ յուղամատիտ։Ջրաներկի կամ գուաշի պարագայում նախապես անհրաժեշտ գույնի ներկը բացել մածուկի խտությամբ։Սեղաներին պետք է դնել լաթ։

1. **Նկարչության պարապմունքների թեմաների ընտրությունը**

Կերպարվեստային պարապմունքների թեմաները ընտրում է դաստիարակը,հաշվի առնելով ծրագրային պահանջները,ուսոցանվող տեխնիկայի բովանդակությունը և երեխաների կենսափորձը։2-3 տարեկան երեխաների նկարչական գործունեությունը կոնկրետ է առարկայական ՝ նրանք նկարում են իրենց շրջապատում գտնվող ծանոթ առարկաները,բնության երևույթները։Առարկայական նկարչություն իրականացնելիս անհրաժեշտ է այն նախապես ուսումնասիրել,շոշափել։Դաստիարակի օգնությամբ երեխաները պետք է նշեն դրա բնորոշ հատկանիշները՝ գույնը,ձևը, չափը։Երեխայի մոտ ձևավորվում է հստակ պատկերացում տվյալ առարկայի մասին,հստակեցվում է դրա տեղը տարածության մեջ։

2. **Նկարչական պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները**

Կրտսեր խմբում կերպարվեստային պարապմունքները կազմակերպվում են եթախմբերով։Նման աշխատանքի ոճը թույլ է տալիս իրականացնել անհատական աշխատանք.մի քանի հոգիանոց եթախմբի անդամներին դաստիարակը հեշտությամբ է սովորեցնում ճիշտ օգտվել կերպարվեստային նյութերից։Դաստիարակը նստում է երեխաների հետ նույն սեղանի շուրջ,փոքրիկ աթոռի վրա,որպեսզի տեսանելի լինի բոլորի կողմից։Այս տարիքային խմբում բոլոր պարապմուքներն անցնում են խաղի ձևով։

3. **Նկարչական աշխատանքների պահպանումը**

Երեխաների աշխատանքների պահպանումը առանձին թղթապանակներով արդյունավետ է այն առումով,որ հնարավոր է դառնում հետևել յուրաքանչյուր երեխայի նկարչական կարողությունների զարգացմանը։Յուրաքանչյուր պարապմունքի վերջում կազմակերպվում է աշխատանքների դիտում և քննարկում։Այդ ընթացքում կարևոր է խրախուսել ,նշել երեխաների ձեռքբերումը։

Ծեփակերտման պարապմունքների նախապատրաստում։

Ծեփակերտման միջոցով կարելիէ ծեփանյութից ստանալ ծավալ ունեցող և հարթապատկերներ։Որպես ծեփանյութ կարող է հանդես գալ՝ պլաստիլինը,աղի խմորը,կավը և ցանկացած ճկուն էկոլոգիապես մաքուր նյութ,որից հնարավոր է ծեփել։Բացի այդ,որպես ծեփանյութ ձմռանը կարելի է օգտագործել ձյունը,իսկ ամռանը՝ խոնավ ավազը։

Ծեփման միջոցով երեխաների մոտ զարգանում է մանր մոտորիկան։Զևավորվում և զարգանում են ձեռքի աշխատանքի կարողությունները։

Քանի որ 2-3 տարեկան երեխաների ձեռքի աշխատանքը դեռ վարժ չէ ,մատները ուժեղ չեն ,բնականաբար ,ծեփակերտումն իրենից ներկայացնում է որոշակի դժվարություն։Երեխաների համար հեշտ չէ աշխատել մեծ կամ չափազանց փոքր ծեփակտորներով։Ծեփակերտման գործընթացը կարող է կազմակերպվել ինչպես հանտուկ դրա համար նախատեսված պարապմունքներին ,այտպես էլ ազատ ժամանակ։Ծեփի պարապմունքները նպատակ ունեն երեխաների մեջ առաջացնել հետաքրքրություն ծեփվող նյութի նկատմամաբ,ծնոթացնել ծեփանյութի հատկություններին և այդ նյութերով աշխատելու կանոններին։Երեխաները պետք է վարժվեն ստանալ գլանաձև և գնդաձև մարմիններ՝ձեռքի ուղիղ և շրջանաձև շարժումներով։

Այս տարիքային խմբի ծեփակերտման պարապմունքների խդիրներն է՝

- Սովորեցնել ձեռքին ուղիղ /հետ-առաջ/ շարժումներով ստանալ գլանաձև մարմիններ,
- Կատարել ծեփաման վարժություններ՝ երաժշտության ռիթմին համապատասխան /հետ-առաջ,շրջանաձև/,
- Սովորեցնել՝ ձեռքի ափերի շրջանաձև շարժումներով ստանալ,գնդաձև մարմիններ,
- Սովորեցնել՝գլանի 2 ծայրերը միացնել սեղմման միջոցով,
- Սովորեցնել՝ 2 գլանձև մարմինները դնել միմիանց վրա խաչաձև և հատման տեղում սեղմել,
- Սովորեցնել՝ 2 մատով մեկ կտորից առանձնացնել մի քանի փոքրիկ կտորներ,
- Սովորեցնել սկսած աշխատանքը հասցնել ավարտին,
- Զևավորել ինքնուրույն աշխատելու կարողություններ,
- Սովորեցնել՝ խաղերի մեջ կիրառել ծեփման խաղալիքներ։

Ծանոթացում ծեփանյութին

Նպատակներ և խնդիրներ

- Ծանոթացնել երեխաներին ծեփանյութին ՝ պլաստիլին,աղի խմոր,կավ։
- Սովորեցնել ծեփման տարբեր հնարներ ,գործողություններ՝ ճմռել, մեծ կտորներից կտրել փոքրիկ կտորներ,տափակացնել,կլորցնել և պատրաստել գնդիկներ։
- Հետաքրքրություն առաջացնել ծեփանյութի նկատմամբ։
- Մանր մոտորիկայի զարգացում։

Նյութեր և գործիքներ

- Վառ գույների պլաստիլին կամ աղի խմոր։
- Ծեփատախտակներ
- Խաղալիքներ
- Տակդիր է ընդհանուր աշխատանքների համար։

Կիրառվող ծեփակերտման տեխնիկաներ

Ճմռել՝ ձեռքի ափերի և մատների միջոցով սեղմել ծեփանյութը։

Կսմթել՝ մեծ ծեփանյութի կտորից առանձնացնել փոքրիկ մասնիկներ։

Շրմփացնել՝ ձեռքի ափով՝ մատիկներն ուղղած,արագ-արագ խփել ծեփանյութին։

Տափակացնել՝ ծեփանյութը, մատներով սեղմելով ափերի մեջ,տափակեցնել։

Գլանել՝ ձեռքերի ափերի հետ-առաջ շարժումներով ստանալ գլանման մարմին։

Գնդել՝ ձեռքերի ափերի շրջանաձև շարժուների միջոցով ստանալ գունդ։



Ծեփակերտման գործունեություն

Այս տարիքային խմբում ծեփակերտման ընթացքում գնդաձև և գլանձև առարկաների վերբերյալ պատկերացումներ ավելի շուտ են ձևավորվում,քան նկրչության ժամանակ։Սկզբնական շրջանում երեխաները մեկ ամբողջական ծեփանյութից պոկում են մի քանի տարբեր չափի կտորներ։Այնուհետև այդ փոքրիկ մասնիկների՝ ձեռքի ափերի հետ –առաջ/գլանաձև/և շրջանաձև շարժումներով /գնդաձև/կարողանում են տալ որոշակի ձև։

Գնդաձը և գլաձև մարմիներից պետք է սովորեն ծեփել՝

- Պարզ տեսքի առարկաներ՝ օղեր,թխվածքաբլիթներ,անիվ։
- Պարզ տեսքի մրգեր,հատապտուղներ։

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Ճանաչել ծեփվող նյութերը,
- Շրջնաձև շարժումներով ստանալ գնդաձև մարմին,
- Ծեփել գլանհետ-առաջ շարժումներով,
- Գլանի եզրերը միցնել իրար՝ ամուր սեխմելով,
- Ծեփանյութից պոկել փոքր մասեր,
- Ափերի միջոցով տափակացնել ծեփանյութը,
- Սովորել ծեփել պարզ առարկաներ,
- Աշխատել կոկիկ,
- Օգտվել տագդիրից։

Կառուցողական գործողությունների նախապատրաստում։

Կառուցողական անվանումը ծագել է լատիներեն «construction»բառից,որը նշանակում է կառույց։Կառուցողական աշխատանանքները կրտսեր տարիքում եթադրում են՝գործունեություն ,որի ընթացքումստեղծվում են տարբեր նյութերից/մանկական շինանյութ,կոնստրուկտոր,թուղթ,ստվարաթուղթ,բնական նյութեր։Երեխայի կառուցողական գործունեությունը անչափ մոտ ՝ մեծահասակի գեղարվեստատեխնիկական գործնեությանը։Չնայած մանկական շինությունները չունեն հասարակական նշանակություն, և երեխան չի կարող կատարել նորարարություն,սակայն գործունեության այս ձևը հսկայական նշանակություն ունի երեխայի աշխատանքային դաստիարակության վրա։

Կառուցողական գործնեությունը կրտսեր տարիքում կրում է դերային խաղի բնույթ.կառույցը ստեղծելու ընթացքում երեխաները ներգրավում են խաղային հարաբերությունների մեջ։

Կառուցողական աշխատանքների տեսակները

Կառուցողական աշխատանքների տեսակները տարբերվում են ըստ օգտագործված նյութերի։Դրանք են կառուցումներ՝ շինարարական նյութերից,թղթից,ստվարաթղթեից,կենցաղային թափոններից,կառուցումներ բնական նյութերից։Այդ նյութի դետալները բաղկացած են երկրաչափական մարմիներից՝ խորանարդ,գլան ,բուրգ։

Կառուցողական աշխատանքների ծրագրային բովանդակությունը

- Ձևավորել և զարգացնել կառուցողական հմտություններ և կարողություններ,
- Ծանոթացնել կառուցողական նյութին և սվորեցնել աշխատել դրանով,
- Կողմնորոշվել տարածության մեջ։

Կրտսեր խմբի կառուցողական աշխատանքների բովանդակությունը

Կրտսեր խմբի երեխաները պետք է յուրացնեն հետևյալ տեխնիկական հնարները շինարարական նյութերով աշխատելիս.աղյուսները տեղադրել հորիզոնական դիրքով/ճանապարհ,գնացք/։Իրար վրա դնել 4-6 խորանարդներ կամ աղյուսներ և կառուցել աստիճան,աշտարակ։Դաստիարակի խնդիրն է հուշել երեխաներին միևնույն կառույցը կատարել տարբեր եղանակով ՝պատրաստել մահճակալ.

- 2 խորանարդիկներից,
- 2 աղյուսներից,
- 3 խորանարդիկներից,
- Մեծ կամ փոքր խորանարդիկներց։

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Տարբերել և անվանել կառուցողկան հիմնական նյութերը/ըստ ձևի,գույնի/,
- Մեծահասկի օգնությամբ կառուցել նմուշին համապատասխան պարզ շինություն,
- Օգտագործել հնարավորինս շատ կառուցողական նյութեր,
- Խաղալ կառուցած շինություններով։

Գործնական մաս՝ <u>նկարչության,ծեփակերտում,կառուցողական</u> պարապմունքներ։

Նկարչություն

Խաղ - պարապմունք

Թեման՝ «Փուչիկներ արջուկի համար»

Նպատակը՝

- ճիշտ նստել սեղանի շուրջ,
- ճիշտ բռնել մատիտը,
- նկարել ուղիղ,երկար գծեր/թելիկներ փուչիկների համար/։

Առաջացնել հետաքրքրություն նկարչության նկատմամբ։Ծանոթացնել գույներին՝ կարմիր կարմիր ,կապույտ , կանաչ։

Անհրաժեշտ պարգաներ

- ալբոմի թուղթ,որի կետրոնում նախապես նկարված են երեք փուչիկներ՝ կարմիր ,կապույտ ,կանաչ
- գունավոր մատիտներ՝ կարմիր ,կապույտ ,կանաչ ,երեխաների քանակով
- տվյալ թեմայով պատկերազարդ գրքեր,նկարներ
- կարմիր ,կապույտ ,կանաչ փուչիկներ,նույն գույնի հաստ/ոլորած/թել
- խաղատախտակ և խավապատված կարմիր ,կապույտ ,կանաչ գույնի շրջան կամ ձվաձև,նույն գույնի բարակ զոլակներ՝թելեր
- արջուկմ կամ այլ խաղալիք։

Պարապմունքի անցկացման մոթոդիկա

Սեղանի ծածկոցի տակ դրված են կարմիր ,կապույտ ,կանաչ փուչիկներ/այդ պահին թելերը դեռ կապված չեն /։Արջուկը նստած է փուչիկների վրա։

ԾԵՓ

Խաղ - պարապմունք

Թեման՝ «Ծեփենք ցանկապատ»

Նպատակը

Երեխաներին ծանոթացնել՝

- ✓ ծեփակերտման տեխնիկային ՝ ձեռքերի հետ-առաջ շարժումների միջոցով ստանալ գլանաձև մարմիններ,

- ✓ ծեփանյութին և դրա հատկություններին։

Սովորեցնել՝

- ✓ ծեփանյութից ճիշտ օգտվելու կանոնները,
- ✓ աշխատել ծեփատախտակի վրա։

Զնավորել հետաքրքրություն ծեփակերտման նկատմամբ։

Անհրաժեշտ պարագաներ

- պլաստիլին/ աղի խմոր,կավ/
- ծեփատախտակներ՝ ըստ երեխաների քանակի
- խանավ լաթեր
- փոքրիկ տնակ,պատրաստված խորանարդիկներից
- խաղալի-ծառ եղևնի,կենդանիներ։

Պարապմունքի անցկցաման մեթոդիկան

Դաստիարակը երեխաների ներակայությամբ կառուցում է փոքրիկ տնակ,տնակի մոտ կարող է դնել խաղալիք-եղևնի,խաղալիք-ծառ։Կազմակերպում է սեղանային թատրնոն ՝տնակում ապրում է որև է «բարի» կենդանի,մոտակա անտառից գալիս են տարբեր «չար»կենդանիներ և փորձում են ուտել տնակում ապրող կենդանուն։Պարպմունքում չի նշվում խաղալիք-կենդանիների տեսակները,որպեսզի յուրաքանչյուր դաստիարակ հնարավորություն ունենա ընտրել խմբասենյակում եղած խաղալիք-կենդանիներից ։Դաստիարակը առարջակում է կառուցել ցանկապատ,որպեսզի տնակում ապրող կենդանին իրեն ապահով զգա։

Դաստիարակը երեխաներին ցուցադրում է,թե ինչպես կարելի է ծեփանյութից ձեռքերի հետ-առաջ շարժումներով ստանալ գլանաձև մարմիններ։Դաստիարակը երեխաներին է տրամադրում միջին չափի ծեփանյութի կտորներ։Երեխաները օդում ցույց են տալիս ձեռքերի հետ-առաջ շարժումները ,հետո դաստիարակի օգնությամբ փորձում են կատարել նույն գործողությունները՝ ստանալով գլանաձև մարմիններ։Ստացված գլաները երեխաները շարում են ծեփատախտակի վրա։Դաստիարակը պատրաստած գլանները շարում է տնակի շուրջը և նշում,որ բոլոր շատ լավ աշխատեցին և օգնեցին տնակում ապրող կենդանուն՝պատրաստեցին ցանկպատ և այլևս ոչ ոք նրան չի կարող վնասել։Երեխաների աշխատանքները ցուցադրվում են և կազմակերպվում է քննարկում։

Եզրակացություն:

Եկնաք այն եզրակացության, որ առարկայի դերն ու նշանակությունն մասնագետի կայացման արդյունավետությունը կախված է ուսուցման մեթոդների և ձևերի իմացությունից ու տիրապետելու ունակությունից: Մասնագետը պետք է գաղափար կազմի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայիինչպես նաև ընդհանուր մեթոդների մասին: Առարկայի դասավանդման հիմնական նպատակն է բացահայտել մեթոդական այն հարցերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կերպարվեստային գործունության զարգացման համար: Կերպարվեստային գործունությունը կարող է զարգանալ միայն նպատակաուղղված ղեկավարման պայմաններում: Նման ղեկավարումը հնարավոր է այն դեպքում, երբ դաստիարակը հստակ պատկերացնում է իր գործունեության ոլորտը, տեղյակ է ծրագրի բովանդակությանը և մեթոդներին, տիրապետում է նկարչական ունակություններին: Մանկավարժը ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմանները երեխայի իրականության զգացմունքապատկերավոր ընկալման համար: Առարկայի խնդիրներն են՝ երեխայի կերպարվեստային կրթությունը ուղղել նրա ստեղծագործական, պատկերային արվեստի զարգացման, շրջակա միջավայրի իրականության տպավորությունների արտահայտման, արվեստի և գրականության վրա: Նպաստել երեխայի կերպարվեստային կարողությունների, հմտությունների զարգացմանը: Կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի խնդիրն է ստեղծել և կանոնակարգել ուսուցման մեթոդների դիդակտիկ հիմքերը առարկայի դիդակտիկ դրույթները:

Առարկայի դասավանդման կարևորագույն պայմաններից է ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուրին: Ծրագրային նյութը պարբերաբար պետք է համալրվի ժամանակակից մեթոդներով, գիտության և տեխնիկայի բնագավառում ստեղծված նվաճումներով, գրականությամբ:

Օգտագործված գրականության ցանկ։

1.Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ,ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ,ՓՐԻՆԹ ԻՆՖՈ, Երևան ,2011։

2.Նկարչությունը պարտեզում ,Զ. Դաբաղյան,Մեթոդական օգնություն դաստիարակին,Երևան ,1999 48 էջ։

3.Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի /3-4-տարեկանների/կրթական համալիր ծրագիր,/ՀՀ ԿԳՆ,Կրթ.ազգ.ինստ.,-Երևան,Կրթ.ազգ.ինստ.2011,168 էջ։

4.Խաղերի և խաղ-զվարճանքների կազմակերպումը մանկապարտեզում,Լ.Սմբատյան,Հեղինակային հրատարակություն ,Երևան ,2014,224 էջ։

5.«Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր»Երևան,2012թ.

Հավելվածներ: